ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Արագածոտնի մարզի <<Թալինի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի և <<Ալագյազի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի փետրվարի 17-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/1 գնման պայմանագրում 2023 թվականի հունիսի 9-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 25.05.2023թ. N 823-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/1 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
17.02.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/1 գնման պայմանագրի

ք. Երևան 09.06.2023թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով է ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N 823-Ն որոշումը և ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» և «Ալագյազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 17.02.2022թ. կնքված N ՀՀԲԿ-ԳՀԽԾՁԲ-22/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում <<13 800 000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար)>> թվերը և բառերը փոխարինել <<7 350 000 (յոթ միլիոն երեք հարյուր հիսուն հազար)>> թվերով և բառերով՝ համապատասխանաբար նվազեցնելով նաև Պայմանագրի հավելվածներում ՀՀ Արագածոտնի մարզի «Ալագյազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցան աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերմանն առնչվող գումարները:

1.1.2 Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրով և Պայմանագրի բոլոր հավելվածներով հաստատված Համաձայնագրի 1.1.1 կետում նշված գնման առարկային առնչվող դրույթները:

1.1.3 Պայմանագրի 2023 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են 1 (մեկական) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
կառավարական տուն 3	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150009355815863
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01528652
Հ/Հ 900011034551, 900011034544	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
17.02.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/1 պայմանագրի
09. 06 .2023թ. կնքված N 3 համաձայնագրի

<<Հավելված N 2
17.02.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2022թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/6	ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	1 600 000	-	-	1 112 500	2 225 000	2 225 000	2 225 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000
	71351540/5	ՀՀ Արագածոտնի մարզի «Ալագյազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ			1 600 000	-	-	1 112 500	2 225 000	2 225 000	2 225 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000	4 450 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034551, 900011034544
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝

(ստորագրություն) Ա. Վարդանյան

Կ.Տ